
ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՉԵՐՍԱՆԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՋՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Ա. Ս. ՍՈՒԿԱՐՅԱՆ

Հասարակական կյանքում կատարվող փոփոխություններն անմիջականորեն իրենց արտացոլումն են գտնում լեզվի բառապաշարում, որն ընթանում է նոր երևույթների համապատասխան բառերի առաջացումով կամ գոյություն ունեցող բառերի իմաստային զարգացումով: Բառապաշարի զարգացման ու հարստացման գործընթացին նպաստում են նաև ժողովուրդների շփումները: Հայ ժողովրդի մշակութային-տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքին առնչվող օրեցօր աճող հարաբերություններն ու կապերը աշխարհի ժողովուրդների հետ մեր լեզուն հարստացնում են նորակերտ բառերով:

Այս կապակցությամբ էդ. Աղայանը նշում է, որ բառապաշարի զարգացումը լեզվի բառային կազմում տեղի ունեցող այն բոլոր փոփոխությունների ամբողջությունն է, որոնք ուղղված են բառային կազմի մակարդակի արդիականացմանը, լեզվի տվյալ փուլի կառուցվածքին ու համակարգին¹: Ջարգացման այս ընդհանուր գործընթացում կարևորվում են բառապաշարի հարստացումը, իմաստային զարգացումը և կատարելագործումը: Բառապաշարի հարստացումը լեզվի բառային կազմի համալրումն է նոր բառերով: Անդրադառնալով այս հարցին՝ Մ. Աբեղյանը գրում է, որ բառակազմության սովորական եղանակով լեզվի մեջ եղած բառերից ու արմատներից կազմվել և կազմվում են նոր՝ բարդ և ածանցական բառեր: Հայերենը շատ մեծ չափերով ընդունակ է բաղադրության, և այս հատկությունը նպաստում է մեր լեզվի բառապաշարի հարստացմանը և, մանավանդ զիտական ու տեխնիկական օտար բառերի փոխարեն՝ հայերեն նոր բառեր կազմելուն²:

Բառապաշարի հարստացման ներքին ճանապարհը բնորոշ է բոլոր լեզուներին, որոնք իրենց բառակազմական հնարավորություններով կերտում են նորանոր բառեր:

Հայերենը և զերմաներենը՝ որպես հնդեվրոպական ցեղակից լեզուներ, բառակազմության համակարգում ունեն ինչպես ծագումնաբանական ընդհանրություններ, այնպես էլ պատմական զարգացման ընթացքով պայմանավորված տարբերություններ:

Այդ լեզուների բառակազմության զուգադրական քննությունը ցույց է տալիս, որ հայերենում և զերմաներենում տարբեր համամասնությամբ գործում են բառապաշարի հարստացման միևնույն եղանակները՝ արմատական, ածանցական, բառաբարդման, հապավական տեսակներով:

Հայերենում և զերմաներենում պարզ կամ արմատական բառերը առաջին հերթին բաղադրիչների չբաժանվող բառերն են, օրինակ՝ օր – der Tag, սար – der Berg,

¹ Տե՛ս **Գ. Չահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան**, Հայոց լեզու, Եր., 1980, էջ 329:

² Տե՛ս **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 135:

պատ – die Wand, քար – der Stein, դաշտ – das Feld, ցուրտ – kalt, տաք – warm, ծեր – alt և այլն: Մական այս օրինաչափությունից առկա են նաև շեղումներ, ինչպես՝ երեխա – das Kind, գիրք – das Buch, թռչուն – der Vögel և այլն:

Պարզ կամ արմատական գոյականները գերմաներենում հաճախ կազմվում են ուժեղ խոնարհման բայերի արմատներից ձայնավորների հնչյունափոխությամբ՝ Ablaut-ի միջոցով, օրինակ՝ binden (կապել)- das Band (կապ), fließen (հոսել)- der Fluß (գետ):

Հայերենում բայը չունի ուժեղ և թույլ խոնարհման տարբերակում, հետևաբար՝ նաև արմատի ձայնավորի փոփոխություն: Կապել – կապ գուգահեռ օրինակում ձևով և իմաստով նմանություն է դրսևորվում, իսկ հոսել – գետ օրինակում նմանությունն իմաստային է և ձևով տարբերվում է գերմաներենից: Ուժեղ խոնարհման բայերը արմատի ձայնավորը փոխում են Imperfekt – ում (անցյալ ժամանակ): Հետևաբար գերմաներենում գոյականները կազմվում են նաև բայի անցյալ ժամանակի ձևից:

Հայերենի արմատական կազմությունների վերաբերյալ Մ.Աբեդյանը գրում է, որ հնուց ավանդված բազմաթիվ բայեր անուններից են ածանցված (առաջացած), կամ լեզվի մեջ կան դրանց համապատասխան գոյական կամ ածական անուններ, բայց բա՞յն է անունից ածանցված, թե՞ ընդհակառակը, այդ հաճախ դժվար է իմանալ: Օրինակ՝ խնդրել-խնդիր, սիրել-սեր, գործել-գործ, գրել-գիր, պատվել-պատիվ, կարգել-կարգ, ողբալ-ողբ, շողալ-շող, խաղալ-խաղ, հավատալ-հավատ: Բայերի մեծ մասի համար կան այսպիսի արմատական անուններ, որոնց համարանությունը հաճախ նոր անուններ են կազմվում բայերից, ինչպես օրինակ՝ թրթռալ-թրթիռ, մրմռալ-մրմուռ, ծածկել-ծածկ՝³:

Չուգադրվող լեզուներում կան հնդեվրոպական հիմք լեզվից արմատներ, արմատական հիմքեր, որոնցից ձևավորված պարզ գոյականների մի մասի ծագումը կարելի է կապել տարբեր խոսքիմասային՝ բայական կամ ածականական փոխանցման հետ:

Օ. Մոսկալսկայան գտնում է, որ նշված գոյականների՝ das Spiel (խաղ) -spielen (խաղալ), der Schlag (հարված) - schlagen (հարվածել), der Ruf (կանչ) -rufen (կանչել) վերաբերյալ կարելի է համոզված ասել, որ դրանք ածանցվել են համապատասխան բայախիմքերից: Մնացած դեպքերում, օրինակ՝ ածականի արմատի հետ կապված das Licht (լույս) - licht (լուսավոր), der Laut (ձայն) - laut (բարձրաձայն) երբեմն տարբերակելու հարցում դժվարություններն առկա են⁴:

Հիմք ընդունելով այս լեզվաբանների կարծիքը՝ հարկ է նշել, որ հիշյալ լեզուներում հաճախ հնարավոր չէ հստակորեն պնդել, թե առկա արմատահիմքի բայ, գոյական և ածական ձևերից որն է առաջնայինը, և որը՝ ածանցվածը:

Հայերենում և գերմաներենում բայերից, բայաձևերից և ածականներից գոյականների առաջացման կամ ածանցման երևույթները դրսևորում են և՛ ընդհանրություններ, և՛ առանձնահատկություններ:

Բայերից և բայաձևերից գոյականների կերտման գուգադրական քննությունը ներկայացնելու համար նախ անդրադառնանք հայերենի անորոշ դերբայի բնորոշմանը:

Մ. Ասատրյանը ժամանակակից հայերենի բայի անորոշ դերբայի մասին գրում է, որ «նա բոլորովին էլ անորոշ չէ, այլ անվանողական դերբայ է, «սկզբնական», «չփոփոխված» ձև է, և մյուսները ստորադասվում են նրան: Անորոշ դերբայը

³ Տե՛ս նույն տեղը, էջ 234:

⁴ Տե՛ս Օ. **Москальская**, Грамматика немецкого языка, М., 1956, էջ 44:

հողովվում է Ու հողովմամբ և նրա հողովումը փոխանվանական չէ, որովհետև իր մեջ համատեղում է բայի և գոյական անվան հատկանիշներ»⁵:

Անորոշ դերբայն ավելի շատ փոխանվանական - գոյականական նշանակությամբ է գործածվում առարկայացման կարգում, օրինակ՝ անորոշ դերբայ գրել, կարդալ, գոյականացված ձևը՝ գրելը, կարդալը: Գերմաներենում համապատասխանաբար՝ *Infinitiv-schreiben, lesen*, գոյականացված ձևը՝ *das Schreiben, das Lesen*: Այսպիսով, անորոշ դերբայից գոյականի կերտումը նշված երկու լեզուներում էլ պահպանում է իր ընդհանրությունը: Հայերենի հարակատար դերբայը՝ գրած, կարդացած, արտահայտած իմաստով համապատասխանում է գերմաներենի *Partizip II-ին՝ geschrieben, gelesen*: *Partizip II-ը* գերմաներենի բայի դերբայական հիմնական ձևերից է, որն արտահայտում է վաղուց կատարված գործողության գաղափար: Օրինակ՝ հայերենի հարակատար դերբայ՝ բանտարկված, *Partizip II - gefangen*, գոյականացված ձևը՝ բանտարկվածը - *der Gefangene* (տղամարդ բանտարկվածը), *die Gefangene* (կին բանտարկվածը): Այսպիսով, հարակատար դերբայից և՛ հայերենում, և՛ գերմաներենում առաջանում են գոյականներ: Սակայն այս ընդհանրության հետ միաժամանակ ձևավորվում են նաև տարբերություններ՝ պայմանավորված գերմաներենի գոյականի քերականական սեռով:

Ու թեև նշում ենք՝ կին կամ տղամարդ բանտարկվածը (սա միակ հնարավոր միջոցն է թարգմանաբար հայերեն ներկայացնելու), գերմաներենում *der* և *die* հոդերը (արտիկլները) քերականական սեռի արտահայտման ցուցիչներ են: Այս դերբայները ներառում են և՛ գոյականական, և՛ բայական, և՛ ածականական հատկանիշներ:

Ենթակայական դերբայը իմաստով ընդհանրություն ունի *Partizip I-ի* հետ, օրինակ՝ ճանապարհորդող – *reisend*: Հայերենի՝ մի ճանապարհորդող և ճանապարհորդող գոյականացված ձևերին գերմաներենում համապատասխանում են *ein Reisender* կամ *eine Reisende* անորոշ և *der Reisende* կամ *die Reisende* որոշյալ հոդով գործածվող արական կամ իգական սեռի գոյականացված ձևերը: Ենթակայական դերբայից գոյականների կերտման ժամանակ դրսևորվող տարբերությունները պայմանավորված են գերմաներենի գոյականի քերականական սեռով, որը, որպես կարգ, ժամանակակից հայերենի գոյականին բնորոշ չէ: Այսպիսով, գերմաներենում և հայերենում բայերից և բայածներից գոյականների կերտման կամ ածանցման երևույթների զուգադրական քննությունը ցույց է տալիս, որ թեև տարածամասնակյա կտրվածքում պահպանվել են իմաստի արտահայտման ընդհանրություններ հայերենի անորոշ, հարակատար և ենթակայական դերբայների և գերմաներենի *Infinitiv-ի*, *Imperfekt-ի*, *Partizip I-ի* և *Partizip II-ի* միջև, սակայն համաժամանակյա կտրվածքում առաջացել են նաև էական տարբերություններ:

Ածականի գոյականացումը գերմաներենում, ինչպես և հայերենում, կատարվում է ածականը հոդի հետ գործածելով, օրինակ՝ *krank-* հիվանդ, *der Kranke* (հիվանդը, տղամարդ), *ein Kranker* (հիվանդ տղամարդ), *eine Kranke* (հիվանդ կին), *die Kranke* (հիվանդը (կին)), *die Kranken* (հիվանդները): Այս կազմություններում առկա են տարբերություններ, հատկապես անորոշ և որոշյալ հոդերով գերմաներենի գոյականացված կիրառություններում: Երևույթը պայմանավորված է գերմաներենի գոյականի քերականական սեռի առկայությամբ, որի ցուցիչ-հոդը գործածվում է և՛ անորոշ, և՛ որոշյալ ձևերով: Այսպիսով, գոյականների կերտման հիմնական միջոցներից մեկն էլ զուգադրվող լեզուներում այլ խոսքի մասերի գոյականացումն է:

⁵ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2002, էջ 228-229:

Ածանցման միջոցով տարբեր խոսքի մասերից ստեղծվում են նոր բառեր, կատարվում փոխանցումներ մի խոսքի մասից այլ խոսքի մասերի:

Ժամանակակից հայերենի և գերմաներենի ածանցական համակարգը բավականին հարուստ է. այն ներառում է ածանցների բոլոր տեսակները: Հայերենի -իչ, -ով, -վոր և -վորդ, -ացի, -ցի գոյականակերտ վերջածանցներին համապատասխանում է գերմաներենի - er ամենակենսունակ վերջածանցը: Օրինակ՝ նկարիչ - der Maler, երգիչ- der Singer, գրող- der Dichter, գործադուլավոր- der Streiker, վարորդ- der Fahrer, երևանցի- der Jerevaner, մոսկվացի-der Moskauer, - (յ) ակ ածանցին համապատասխանում է - ling-ը՝ պատանյակ- der Jüngling: Հայերենի -ուհի վերջածանցին համապատասխանում է գերմաներենի - in վերջածանցը: Օրինակ՝ der Student - die Studentin, der Schüler - die Schülerin: Հայերենի - ություն վերջածանցին համապատասխանում են գերմաներենի -ung, -schaft, -heit, -keit, -gkeit, -ei, -tum, -e, -nis, -sal վերջածանցները, օրինակ՝ կառավարել - regieren, կառավարություն - die Regierung, բացատրել - erklären, բացատրություն - die Erklärung, ընկեր - der Freund, ընկերություն- die Freundschaft, գիտենալ - wissen, գիտություն - die Wissenschaft, ազատ - frei, ազատություն - die Freiheit, նոր - neu, նորություն - die Neuigkeit, ձկնորս - der Fischer, ձկնորսություն - die Fischerei, ստրուկ - die Sklave, ստրկություն - die Sklaverei, հերոս - der Held, հերոսություն - das Heldentum, թույլատրել - erlauben, թույլվություն - die Erlaubnis, տխուր - trüb, տխրություն - die Trübsal, օգնել - helfen, օգնություն - die Hilfe: Eи-ը ունի նաև - արան վերջածանցի իմաստ, օրինակ՝ տպարան - die Druckerei, տպել - drucken: Հայերենի -ուստ, -ք վերջածանցներին գերմաներենում համապատասխանում է -t վերջածանցը, որը միանում է բայահիմքին, և արմատում տեղի է ունենում ձայնավորների հերթագայություն՝ schreiben - die Schrift (գրել- գրվածք), fliehen - die Flucht (փախչել- փախուստ): Հայերենի -ակ, -իկ նվազական, փաղաքշական վերջածանցներին համարժեք են գերմաներենի -chen, -lein փոքրացուցիչ վերջածանցները, օրինակ՝ տուն - տնակ - das Haus - das Häuschen, վարդ - վարդիկ - die Rose - das Röslein: Հայերենի -ուտ վերջածանցին գերմաներենում համապատասխանում է ge- նախածանցը, օրինակ՝ թուփ- der Busch, թփուտ - das Gebüsch, վազել - laufen, վազվզոց (բազմապատկական, կրկնվող իմաստ) - das Gelaufe: Հայերենի ան-, ապ-, դժ-, տնախածանցներին համապատասխանում են գերմաներենի un-, miß- նախածանցները: Օրինակ՝ միտք - der Sinn, անմտություն - der Unsinn, օրինականություն - die Gesetzlichkeit, ապօրինություն - die Ungesetzlichkeit, կամք - der Wille, դժկամություն - der Unwille, գիտելիք - die Kenntnis, տգիտություն - die Unkenntnis, հաճույք - das Vergnügen, տհաճություն - das Mißvergnügen: Un- նախածանցը ուժեղացնում է նաև գոյականի արտահայտած իմաստը, օրինակ՝ թիվ- die Zahl, անթիվ- die Unzahl:

Այսպիսով, համապատասխան ածանցներով բայերից, գոյականներից և ածականներից գոյականների կերտման օրինակները երկու լեզուներում էլ դրսևորում են բառակազմական և իմաստային ընդհանրություն: Փախչել - fliehen և փախուստ - Flucht զուգահեռ համապատասխան գոյականների կազմության մեջ գերմաներենում տեղի է ունենում ձայնավորների հերթագայություն՝ ic → u, իսկ հայերենում չսուկածանցը (ունի միայն բառակազմական արժեք) ընկնում է՝ բայիմաստի վրա առանց որևէ իմաստային ազդեցություն թողնելու: Առանձնահատկություն է դրսևորվում նաև հայերենի -ուտ վերջածանցի և նրան համապատասխանող գերմաներենի ge- նախածանցի դիրքային, ինչպես նաև իմաստային արտահայտություններում: Ընդ որում un- նախածանցի երկիմաստությունը՝ մի դեպքում ժխտում է արտահայտում, մյուսում՝ իմաստի ուժեղացում:

Հայերենի գեր-, նախ- նախածանցներին համապատասխանում են գերմաներենի erz-, ur- նախածանցները: Օրինակ՝ ծույլ մարդ - der Faulenzer, գերծույլ, չափազանց ծույլ մարդ-der Erzfaulenzer, մարդ-der Mensch, նախամարդ-Urmensch, լեզու-die Sprache, նախալեզու-die Ursprache:

Որպես գոյականներ նախածանցներ՝ հայերենում և գերմաներենում համապատասխանաբար գործածվում են՝ հակ-, փոխ-, համ-, մակ-, gegen-, mit-, bei- նախածանցները, օրինակ՝ փաստարկ - der Beweis, հակափաստարկ - der Gegenbeweis, այցելություն - der Besuch, փոխայցելություն - der Gegenbesuch, քաղաքացի - der Bürger, համաքաղաքացի - der Mitbürger, անուն - der Name, մականուն - der Beiname:

Չուզադրական քննությունը ցույց է տալիս, որ հայերենի - ուն, - կոտ, - ային, - ական, -ավուն վերջածանցներին համապատասխանում է գերմաներենի -lich վերջածանցը՝ օրինակ՝ մոռանալ - vergessen, մոռացկոտ - vergeßlich, շարժել - bewegen, շարժուն - beweglich, մարդ - der Mensch, մարդկային - menschlich, հասարակություն - die Gesellschaft, հասարակական - gesellschaftlich, կարմիր - rot, կարմրավուն - rötlich, դեղին - gelb, դեղնավուն - gelblich:

Հայերենի -ան, - եղ, - ու ածականակերտ վերջածանցների իմաստն արտահայտվում է գերմաներենի -ig վերջածանցով: Օրինակ՝ փնփնթալ - brummen, փնփնթան - brummig, հատել - schneiden, հատու - schneidig, ուժ - die Kraft, ուժեղ - kräftig, այժմ - jetzt, այժմյան - jetztig:

Հայերենի -այի, -ելի ածականակերտ վերջածանցներին համապատասխանում է -bar ածականակերտ վերջածանցը: Օրինակ՝ ուրանալ - leugnen, անուրանալի - unleugbar, համեմատել - vergleichen, համեմատելի - vergleichbar, տեսք - die Sicht, տեսանելի - sichtbar:

Հայերենի -ոտ, -ական, -ե, -յա, -յան ածականակերտ վերջածանցներին գերմաներենում համապատասխանում են -haft, -isch, -en, -ern, -er վերջածանցները, ան - նախածանցին՝ -los վերջածանցը: Օրինակ՝ սիրտ - das Herz, սրտոտ - herzhaft, հերոս - der Held, հերոսական - heldenhaft, Հայաստան - Armenien, հայկական - armenisch, հռետոր - der Redner, հռետորական - rednerisch, ոսկի - das Gold, ոսկյա, ոսկե - golden, պողպատ - der Stahl, պողպատյա, պողպատե - stählen, Երևան - Jerewan, երևանյան - jerewaner, հետք - die Spur, անհետ - spurlos, ուժ - die Kraft, անուժ - kraftlos:

Այսպիսով, ածականակերտ ածանցների իմաստային և դիրքային ընդհանրությունների հետ մեկտեղ նկատվում է նաև շեղում. հայերենի ան- նախածանցին համապատասխանում է -los վերջածանցը:

Հայերենի գեր-, ան-, դժ-, ապ- նախածանցներին համապատասխանում են գերմաներենի ամենակենսունակ ur-, un- և erz- ածականակերտ նախածանցները: Օրինակ՝ ծույլ - faul, գերծույլ - erzfaul, ծանոթ - bekannt, անծանոթ - unbekannt, զոհ - zufrieden, դժզոհ - unzufrieden, երջանիկ - glücklich, ապերջանիկ - unglücklich:

Ժամանակակից գերմաներենում բայերն առաջանում են պարզ գոյականներից փոխանցման միջոցով և կոչվում են անվանական թույլ բայեր, ինչպես՝ die Bombe - ռումբ, bomben - ռմբահարել, der Plan - ծրագիր, planen - ծրագրել: Այս պարզ բայերին հայերենում համապատասխանում են անաժանց, պարզ բայերը:

Գերմաներենում պարզ բայերն առաջանում են նաև գոյականի արմատի ձայնավորի փոփոխությամբ (Umlaut), ինչպես՝ die Zahl-հաշիվ, zählen - հաշվել, der Pflug - գութան, pflügen - գութանել (հնց.), վարել, der Schatz - զանձ, schätzen -

արժևորել: Արմատի ձայնավորի փոփոխությամբ պարզ գոյականներից կազմված օրինակներում բայերի կազմություններն ու համապատասխան իմաստները հայերենում գոյականից հեռացած են և դրսևորում են առանձնահատկություններ:

Նույն համաբանությամբ թույլ բայեր են կազմվում ածականների հիմքերից, ինչպես՝ warm - տաք, wärmen - տաքացնել, stark - ուժեղ, stärken - ուժեղացնել, kurz - կարճ, kürzen - կարճացնել: Այս բայերն արտահայտում են պատճառական իմաստ և միմյանց հետ ունեն ընդհանրություններ և՛ կազմության, և՛ իմաստային առումներով: Գերմաներենում գոյականից և ածականից բայակերտման երևույթը պատմական զարգացման ընթացքում փոփոխություններ է կրել: Օ. Մոսկալսկայան գրում է, որ «հին գերմանական լեզուներում այդ բայերը հիմքում՝ արմատին կից, ունեցել են բառակազմական հատուկ ածանցներ, որոնք ժամանակակից գերմաներենում չեն պահպանվել, և արմատի ձայնավորի փոփոխությամբ բազմաթիվ թույլ բայերի կազմությունը կապված է հին վերին գերմաներենում գոյություն ունեցած -i- հիմքի ածանցի հետ»⁶:

Գերմաներենում կան բայեր, որոնք առանց ածանցի կազմվում են բարդ գոյականներից և չնայած առաջին բաղադրիչը շեշտվում է, բայց և այնպես չի բաժանվում բարդությունից, ինչպես՝ das Frühstück - նախաճաշ, frühstücken - նախաճաշել, das Kennzeichen - նշան, kennzeichnen - նշել:

Ի տարբերություն գոյականի և ածականի՝ գերմաներենում բային բնորոշ է միայն նախածանցման միջոցով բառակազմությունը, ընդ որում՝ բայակերտ նախածանցները բաժանվում են երկու խմբի՝ բայից անջատվող և չանջատվող: Գերմաներենի՝ բայից չանջատվող նախածանցները շեշտակիր չեն: Դրանք են՝ be-, ge-, er-, ver-, ent-, miß -, zer-, emp-: Օրինակ՝ bedecken- ծածկել, bewohnen - բնակեցնել, gelingen - հաջողվել, erzählen – պատմել, verkaufen – վաճառել, verfolgen - հետապնդել, entbinden - քանդել, mißbrauchen - չարաշահել, zerstören - ավերել, empfehlen - առաջարկել:

Անջատվող նախածանցներից առավել կենսունակ են՝ ab-, an -, auf-, ein-, aus-, mit-, nach-: Անջատվող նախածանցները շեշտված են, այսինքն՝ բառաշեշտի կրողներ են: Օրինակ՝ abgeben -հետ տալ, aufstehen - վեր կենալ, eintreten - մերս մտնել, ausgehen - դուրս գալ, mitnehmen - հետը վերցնել, nachgehen - մեկի հետևից գնալ: Զուգադրական քննությունը ցույց է տալիս, որ գերմաներենի անջատվող նախածանցով բայերին հայերենում համապատասխանում են հարադրական բարդությունները:

Գերմանացի լեզվաբան Վ. Վիլմանսը անջատվող նախածանցով բայերը անվանում է «բաժանվող բարդություններ» կամ «կիսաբարդություններ»⁷:

Մ. Գ. Ստեպանովան, հաշվի առնելով գերմաներենի՝ անջատվող նախածանցով բայերի յուրօրինակ կառուցվածքը, նշում է, որ այդ կազմություններում մակբայական և նախդրավոր բաղադրիչները հանդես են գալիս նաև որպես նախածանց, ցուցաբերում բայակազմական հատկություն և դառնում նոր կազմված բայի բաղադրիչ⁸:

Նախածանցավոր կամ նախդրավոր բայերի մասին Մ. Աբեդյանը գրում է, որ բայերի վրա դրվող նախդիրները կամ, ինչպես ասում են, «նախաբայերը» մեծ տեղ ունեն հնդեվրոպական հին լեզուների մեջ, ինչպես՝ հունարենում և լատիներենում,

⁶ Օ. Москальская, նշվ. աշխ., էջ 224:

⁷ Տե՛ս Վ. Վիլմանս, Deutsche Grammatik, Abt.II, Straßburg, 1896, էջ 115:

⁸ Տե՛ս Մ. Դ. Степанова, Словообразование современного немецкого языка, М., 1953, էջ 278:

իսկ նոր լեզուներից՝ ռուսերենում և գերմաներենում, սրանք հայերենում նախագրաբարյան շրջանում արդեն գործածությունից դուրս են եկել: Մեր նոր լեզվի մեջ կան բազմաթիվ հարադրական բայեր, նրանցից կազմված կցական բարդություններ, նախդրավոր կազմություններ, որոնք դիտվում են իբրև մի բառական միություն և համապատասխանում են ուրիշ լեզուների նախդրավոր բայերին⁹:

Հայերենի վեր կենալ, ներս մտնել, դուրս գալ և այլ հարադրական բարդություններին գերմաներենում համապատասխանող *aufstehen*, *eintreten*, *asugehen* անջատվող նախածանցով բայերը ունեն և՛ համադրական, և՛ հարադրական կազմություններ, օրինակ՝

վեր կենալ	վեր կացել	վեր կացած
<i>aufstehen</i>	<i>stand auf</i>	<i>aufgestanden</i>

Չուգարվող բայերը ընդհանրություն և առանձնահատկություն են ցուցաբերում սահմանական եղանակի ներկա, անցյալ, ապառնի ժամանակային ձևերում, հրամայականում, օրինակ՝

ես վեր եմ կենում (ներկա)	-	<i>ich stehe auf (Präsens)</i>
ես վեր կացա (անց. կատ.)	-	<i>ich stand auf (Präteritum)</i>
ես վեր եմ կացել (անցյալ)	-	<i>ich bin aufgestanden (Perfekt)</i>
ես վեր եմ կենալու (ապառնի)	-	<i>ich werde aufstehen (Futur I)</i>
վեր կաց (հրամայական)	-	<i>steh auf! (Imperativ)</i>

Համեմատվող օրինակների կազմությունները ցույց են տալիս, որ հայերենի հարադրական բարդությունների կայուն վիճակի համեմատությամբ գերմաներենի անջատվող նախածանցով բայերը գտնվում են համադրական և հարադրական ձևերի միջակայքում:

Ժամանակակից հայերենում իսկական բարդությունները կարող են լինել հոդակապով կամ անհոդակապ: Գերմաներենում բարդ գոյականները հիմնականում անհոդակապ կապակցություններ են, ինչպես՝ *das Vaterland* - հայրենիք, *der Vater* - հայր + *das Land* - երկիր, *die Landkarte* - աշխարհագրական քարտեզ, *das Land* - երկիր + *die Karte* - քարտեզ, *die Eisenbahnlinie* - երկաթգիծ - *das Eisen* + *die Bahn* + *die Linie*:

Բարդ գոյականները ստանում են բարդության վերջին բաղադրիչի քերականական սեռն արտահայտող ցուցիչ - հոդը:

Գերմաներենում առկա են նաև հոդակապով կազմություններ, և որպես հոդակապ հանդես են գալիս *-(e)s*, *-e*, *-(e)n*, *-er* հնչյունները և հնչյունական միացությունները, օրինակ՝

-s	-	<i>der Geburtstag</i> - ծննդյան օր - <i>die Geburt</i> + <i>s</i> + <i>der Tag</i>
-es	-	<i>die Jahreszeit</i> - տարվա եղանակ - <i>das Jahr</i> + <i>es</i> + <i>die Zeit</i>
-e	-	<i>die Haltestelle</i> - կանգառ - <i>der Halt</i> + <i>e</i> + <i>die Stelle</i>
-n	-	<i>die Straßenbahn</i> - տրամվայ - <i>die Straße</i> + <i>n</i> + <i>die Bahn</i>
-en	-	<i>die Heldentat</i> - հերոսություն - <i>der Held</i> + <i>en</i> + <i>die Tat</i>
-er	-	<i>der Kindergarten</i> - մանկապարտեզ - <i>das Kind</i> + <i>er</i> + <i>der Garten</i>

Ինչպես ժամանակակից հայերենի, այնպես էլ գերմաներենի բառակազմական համանուններում նոր երևույթ է միևնույն արմատներից կազմված հոդակապով և անհոդակապ բարդությունների տարբեր իմաստներ արտահայտելը, օրինակ՝ հրածիզ (զինվոր), հրծիզ (հրդեհող), *der Landmann* (*Bauer* - գյուղացի), *der Landsmann* (համերկրացի):

⁹ Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 149-150:

Հայերենում և գերմաներենում բառաբաղադրման եղանակ է նաև հապավումը: Բաղադրյալ հապավական անունները լինում են տառային, վանկային, վանկաբառային, տառաբառային, առաջին տառերով, առաջին վանկերով, առաջին ձայնավոր և բաղաձայն տառերով ստեղծված, օրինակ՝

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն – RA - Republik Armenien

Գ-ԳՀ - Գերմանիայի Դաշնային Հանրապետություն – BRD - Bundesrepublik Deutschland

Քրիստոսի ծննդից առաջ – v. Chr. G - vor Christi Geburt

հրատ. - հրատարակություն – Ausg. - Ausgabe

ՍՍ - Սոցիալական ապահովագրություն - SV - Sozialversicherung

հմնտ. - համեմատի՞ր – vgl. - vergleich! (e)

ԱՄՆ - Ամերիկայի Միացյալ Նահանգներ – Ver. St. (V. A.) - Vereinigte Staaten (von Amerika)

ՔՕ - քրեական օրենսգիրք – StGB - Strafgesetzbuch

սետհամալսարան – Staatsuniversität

գետնուղի, ստորգետնյա ուղի – die U-Bahn - die Untergrundbahn

սուզանավ, ստորջրյա նավ – die U-Boot - das Unterseeboot:

Այսպիսով, հայերենի և գերմաներենի բառապաշարի հարստացման բառակազմական եղանակների զուգադրական քննությունը հավաստում է, որ երկու լեզուներում էլ կան անաժանց և աժանցական բառակերտման, բառաբարդման և հապավման պատմականորեն ժառանգված և պահպանված միջոցներ, որոնք դրսևորում են ընդհանրություններ, ինչպես նաև՝ առանձնահատկություններ՝ պայմանավորված այդ լեզուների զարգացման ընթացքում կրած փոփոխություններով:

А. С. СУВАРЯН — Попытка сопоставительного анализа способов обогащения армянского и немецкого языков. — Сопоставительное изучение способов обогащения лексики армянского и немецкого языков свидетельствует, что в обоих языках средства аффиксального и безаффиксального словообразования, словосложения и аббревиации, в том числе давно существующие, имеют как сходства, так и различия, обусловленные особенностями развития этих языков.